ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

18 մարտի 2025թ.

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին

ԷՔՍՊՐԵՍՍ ՖՈՒԴ ՍՊԸ-ի տնօրեն
Աննա Մանթարյանին

Հարգելի Մանթարյան,

ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանի (այսուհետ՝ Գնորդ) և ԷՔՍՊՐԵՍՍ ՖՈՒԴ ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2025թ.-ի հունվարի 20-ին կնքվել է համաձայնագիր, որով ուժի մեջ է մտել 2025թ.-ի հունվարի 17-ին կնքված **ԱՔ-ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/1-3** ծածկագրով գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր): Պայմանագրի շրջանակներում Վաճառողը ստանձնել է պարտավորություն մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ապրանքները: Ձեր կողմից ներկայացված գրության համաձայն հրաժարվում եք Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու հիմքով ՀՀ Արմավիրի մարզ Արմավիրի համայնքապետարանը հարկադրված է 2025թ.-ի մարտի 19-ից Պայմանագիրը ամբողջությամբ միակողմանի լուծել: Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:
Միաժամանակ հայտնում ենք, որ Վաճառողին տրվում է 5 աշխատանքային օր՝ որակավորման և պայմանագրի ապահովումները՝ համապատասխանաբար **628315 (վեց հարյուր քսանութ հազար երեք հարյուր տասնհինգ)** ՀՀ դրամի և **418877 (չորս հարյուր տասնութ հազար ութ հարյուր յոթանասունյոթ)** ՀՀ դրամի չափով, վճարելու համար: Փոխանցումը անհրաժեշտ է կատարել Գնորդի բանկային հաշվին **(ՀՀ Ֆինանսների նախարարություն 900335201092)**:

Սահմանված ժամկետում փոխանցումը չկատարելու դեպքում պարտավորվում ենք որոշում կայացնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6/ա-րդ կետի համաձայն ԷՔՍՊՐԵՍՍ ՖՈՒԴ ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**